ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

26 ՀՈՒՆՎԱՐԻ, 2018 թ.
№ 1 (1018)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 52 -րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ. ՄԵՐ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ

«Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունն անքակտելիորեն կապված են հայոց պետականության վերականգնման պատմական իրողության հետ, քանզի պետություն և բանակ հասկացությունները միմյանց պայմանավորող են, և դժվար է, եթե չասենք անկարելի, պատկերացնել մեկն առանց մյուսի: Ե՛վ մեկի, և՛ մյուսի համար ամեն ինչի սկիզբը եղավ 1988 թ. փետրվարը՝ սկիզբը Ղարաբաղի համար պայքարի, պետականության վերականգնման ու Ազգային բանակի ստեղծման:

…Իր կարճատև պատմության մեջ անցնելով թե՛ պատերազմի և թե՛ բանակաշինության ծանրագույն փորձությունները, մեր բանակը կոփվեց և դարձավ մեր անկախ պետականության կարևորագույն երաշխիքը, հայ ժողովրդի արդարացի հպարտության և ոգևորության աղբյուր»:

ՀՀ նախագահի խոսքերը հայ ժողովրդի կյանքի մի դժվարին ժամանակահատվածի պատմության արտացոլումն են, երբ կյանքի ու մահվան սահմանագծին կերտվում էր մեր պատմության նոր էջը: Թե՛ պատերազմի, թե՛ բանակաշինության փորձությունները հայ զինվորը պատվով հաղթահարեց: Այսօր էլ նա աննկուն ու աներեր կանգնած է հայրենիքի սահմանին ու հաստատուն է պահում այդ սահմանը ուխտադրուժ թշնամու ոտնձգություններից:

«Մեր բոլոր ռազմական հաղթանակների, հաջողությունների ամենամեծ գրավականը մեր զինվորն է: Ոչ մի հաղթանակ չէր լինի, եթե մենք չունենայինք այդ հրաշալի ֆիդայի կամավորական տղաներին, որոնցով սկսեցինք: Կռվեցին, զոհվեցին, իրենց արյունով երկիրը պահպանեցին, տարան առաջին խոշոր հաղթանակները և թիկունքում հնարավորություն տվեցին ստեղծել կանոնավոր բանակ: Ոչ մի հաջողություն չէինք ունենա, մեզ ոչ ոք չէր օգնի, դաշնակից չէր լինի, եթե մենք չունենայինք այսօրվա զորակոչիկին ու գեղեցիկ բանակը՝ իր բոլոր թերություններով հանդերձ,-ասում էր Վազգեն Սարգսյանը:-1992 թվականին Հայաստանի Հանրապետության նորաստեղծ բանակի առաջին շքերթի օրն այս հրապարակում ես պատիվ եմ ունեցել բարձրաձայն երազել այն օրը, երբ հայ զինվորի երդումն այլևս արտառոց չի թվա աշխարհին, երբ մենք կունենանք այն սովորական բանակը, որ այլևս չի շարժի աշխարհի ներողամիտ ժպիտը: Այսօր մենք ունենք սովորական մեր բանակը, որն ստիպում է հաշվի նստել իր հետ, բայց դրանով մենք չպետք է հանգստանանք: Անընդհատ պետք է աշխատենք բանակի հզորացման, կարգապահության, մարտական պատրաստականության բարձրացման ուղղությամբ»:

Սպարապետի երազանքն իրականացել է. այսօր հայոց ազգային բանակը մեր անկախ պետականության երաշխավորն է, մեր խաղաղ առավոտների անդուլ պահապանը:

ՀՊՄՀ 95-ամյակի առթիվ

Մանկավարժական համալսարանի հիմնադրման 95-ամյակի առթիվ մասնաշենքերում բացվել է բուհի տարբեր տարիների պատմությունը ներկայացնող մեծածավալ ցուցահանդես, որն ընդգրկում է շուրջ 500 գունավոր, ինչպես նաև սև և սպիտակ լուսանկար:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՊԱՀՊԱՆԵԼ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանում կայացավ բուհի Հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան ընդլայնված նիստը: Բացելով նիստը՝ հոգաբարձուների խորհրդի նախագահ, Աժ պատգամավոր Գալուստ Սահակյանը ողջունեց ներկաներին և ներածական խոսք ասաց Մանկավարժական համալսարանի գործունեության, այդ թվում՝ դիմորդների նվազման պայմաններում ուսանողների որոշակի քանակության, բուհի զարգացմանը միտված լավագույն ավանդույթների պահպանման և առաջընթացի մասին:

Խորհրդի անդամները դիտեցին Լրատվության և հանրության հետ կապերի վարչության պատրաստած ֆիլմը ընթացիկ ուսումնական տարում համալսարանի գործունեության տարբեր ոլորտներում ձեռքբերումների, հաջողությունների ու առաջընթացի մասին:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ներկայացրեց 2017 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականը, 2018 թվականի բյուջեի նախահաշիվը:

Բուհի ղեկավարն անդրադարձավ հանրապետությունում դիմորդների թվի նկատելի նվազմանը, թեև Մանկավարժականի դիմորդների թիվը գրեթե անփոփոխ է, ընդգծեց ուսանողների թվի հնարավոր աճը մի շարք մասնագիտությունների վերանայման պայմաններում, ինչպես նաև Մանկավարժական համալսարան օտարերկրյա դիմորդներ ընդունելու համար համապատասխան դասախոսական ներուժի առկայությունը:

➤2

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՊԱՀՊԱՆԵԼ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

➢1 Բուհի տարբեր գործընթացներում առաջընթացի ու զարգացումների ամրագրման մասին խոսեց Խորհրդի անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը:

Ուսանողական խորհրդի նախագահ Ներսիկ Մարգարյանն ընդգծեց բուհի ուսանողակենտրոն քաղաքականությունը՝ փաստելով, որ Մանկավարժականում գնահատում են ուսանողի գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվությունն ու կամավորական աշխատանքը:

Համալսարանի խորհուրդը 2017 թվականին կատարված աշխատանքը գնահատեց բավարար և քվեարկությամբ միաձայն հաստատեց 2018 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը:

Խորհրդի նիստն ամփոփեց Գ. Սահակյանը՝ վստահեցնելով. «Մանկավարժական համալսարանը դեռ շատ անելիքներ ունի. նա պետք է հաղթահարի մանկավարժության ոլորտում առկա խնդիրները, որոնք կնպաստեն հանրապետությունում մի շարք խնդիրների լուծմանը»:

Տարեվերջյան գիտական խորհրդի նիստում

Մանկավարժական համալսարանի մեծ դահլիճում անցկացվեց տարեվերջյան Գիտական խորհրդի նիստը: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմին և ռեկտորատի անձնակազմին ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը ներկայացրեց 2017 թվականի համալսարանի գործունեությունը:

Ցուցադրվեց համալսարանի մասին հանգամանորեն պատմող տեսաֆիլմ, ուր նկատելի էին բուհի շոշափելի ձեռքբերումներն ու առաջընթացը գիտաուսումնական տարբեր գործընթացներում:

Ֆիլմի ցուցադրումից հետո ՀՊՄՀ ռեկտորը հակիրճ ներկայացրեց 2017 թվականի գործունեությունը՝ ընդգծելով ու կարևորելով բուհի հետագա առաջընթացը պայմանավորող գործոնները: Նա մասնավորապես խոսեց համալսարանի միջազգայնացման և ուսանողների փոխանակման տարբեր ծրագրերի, բուհական ընդունելության, Google Classroom-ի, թիրախային համարվող տարբեր գործընթացների մասին:

Այնուհետև համալսարանի ղեկավարն իր զեկուցումն ավարտեց բուհի եկամուտների ու ծախսերի դինամիկայի մասին ամփոփ տեղեկատվությամբ ու 1918-ի նախահաշվի ներկայացմամբ:

Համալսարանի գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը ներկայացրեց համալսարանի 2017 թվականի գիտական գործունեությունը: Նա մասնավորապես ներկայացրեց իրականացված և ընթացքի մեջ գտնվող 10 բազային և 4 թեմատիկ գիտական տարբեր ծրագրերի գործունեությունն ու արդյունավետությունը, խոսեց համալսարանում բացված լաբորատորիաների աշխատանքի մասին, հանգամանորեն անդրադարձավ Գիտահետազոտական կենտրոնի գործառույթներին, համալսարանի կողմից անցկացված միջազգային գիտաժողովների, 2018-ին հաստատման ներկայացված գիտական ծրագրերի, արտերկրի բուհերի և մեր համալսարանի դասախոսների փոխանակման, բուհում Շախմատի միջազգային ինստիտուտի բացման, գիտական հրապարակումների և տպագրված գրքերի շնորհանդեսների կազմակերպման մշակույթի ձևավորման, հետբուհական մասնագիտական կրթության, վերապատրաստման ծրագրերի իրականացման և այլ հարցերի շուրջ:

Գիտական խորհրդի անդամները համալսարանի 2017 թվականի գործունեությունը գնահատեցին «բավարար»:

Ռեկտորը շնորհավորեց բոլորին գալիք տոների կապակցությամբ և մաղթեց հաջողություններ հաջորդ տարում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում դպրոցների տնօրենների հետ

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը հանդիպեց բուհի պրակտիկայի կենտրոն-դպրոցների տնօրեններին՝ քննարկելու հետագա անելիքները, լսելու նրանց առաջարկները: Ռեկտորը վստահեցրեց, որ մեծ ուշադրություն է դարձվում պրակտիկային, ինչն ուղղակիորեն ազդում է ուսումնական գործընթացի վրա:

Տնօրենները խոսեցին պրակտիկայի ուժեղ և թույլ կողմերի մասին՝ բարձր գնահատելով պրակտիկայի ղեկավարների աշխատանքը և ուսանողների՝ տարեցտարի նկատելի պատրաստվածությունը:

Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տնօրեն Աշոտ Ալիխանյանն առաջարկեց կրթահամալիրում հիմնել Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոն, որն իսկական լաբորատորիա կլինի և երկուստեք փոխշահավետ:

Տնօրենները խոսեցին նաև դպրոց-բուհ համագործակցության անհրաժեշտության մասին. այցելությունների և մասնագիտական կողմնորոշման դասընթացների միջոցով փորձ է արվում ամրապնդել նաև բուհ-աշակերտ կապը:

Դպրոցների ղեկավարներն առաջարկեցին ավելացնել մանկավարժական պրակտիկայի դասաժամերը, իսկ առավել օբյեկտիվ գնահատման համար մշակել պրակտիկայի գնահատման նոր գործիքներ. «Երբեմն տեսական փայլուն գիտելիքներ ունեցող շրջանավարտը դասարան մտնելիս փաստի առաջ է կանգնում, քանի որ թերանում է գործնական տեսանկյունից»:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց դպրոցների տնօրեններին համագործակցության համար և կոչ արեց միմյանց աջակցել, համագործակցել տարբեր ուղղություններով և չբավարարվել ունեցած հաջողություններով:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.



«Պետք է կարողանալ պահպանել հավասարակշռությունը անհրաժեշտ աջակցության և օբյեկտիվ գնահատման միջև»,- ասում է Վ. Սարգսյանը

Մանկավարժական համալսարանում պրակտիկաների ընթացքում կատարած աշխատանքների արդյունքների՝ ասել է թե պրակտիկայի թղթապանակի պաշտպանության շրջան է: Դեկտեմբեր-հունվար ամիսների ընթացքում համապատասխան ժամանակացույցով յուրաքանչյուր ֆակուլետում կազմակերպվող այս գործընթացը իր յուրահատկություններով հանդերձ ընդհանրությունների մեջ է իմաստավորվում:

Համալսարանի Պրակտիկայի կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Սարգսյանից փորձեցինք պարզել պրակտիկայի արդյունքների պաշտպանության հիմնական նպատակները:

«Նախ և առաջ պրակտիկայի նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու, պրակտիկայի որակի բարելավման, ինչպես նաև արդյունքը ամփոփիչ ատեստավորման գործընթացում ներառելու և գնահատելու նպատակով որոշեցինք կազմակերպել պրակտիկայի ընդհանուր աշխատանքների արդյունքներն ամփոփող թղթապանակի պաշտպանությունը»,- ասում է Պրակտիկայի կենտրոնի ղեկավարը:

Ցանկացած գործընթաց կարևորում է իմաստավորվելու և գնահատվելու դեպքում՝ գործընթացի հետադարձ կապի, ուժեղ ու թույլ կողմերի բացահայտմամբ:

Գործընթացի կազմակերպումն ապահովագրված չէ ռիսկերից: Հնարավոր է, որ ճարպիկ ու հնարամիտ ուսանողին հաջողվի հրաշալի ներկայացնել նաև իր չկատարած աշխատանքը, և հակառակը՝ պրակտիկան լավագույն ձևով անցկացրած ուսանողը չկարողանա ներկայացնել իր արածը: Բոլոր դեպքերում պրակտիկայի արդյունքների պաշտպանությունը միտված է ուսանողների կարողությունների վերհանմանը, և գործում է հավասարակշռված գնահատման համակարգ. ուսանողը բնութագրից, օրագրից և այլ թղթերից բացի պետք է կարողանա ներկայացնել պրակտիկայի ընթացքում անցկացրած դասից մի հատված, որից անմիջապես նկատելի է դառնում, թե ուսանողը ինչ որակ է ապահովել…

Մանկավարժահոգեբանական-սոցիալական մասնագիտությունների դեպքում հատկապես կարևոր է բանավոր խոսքը, որ երբեմն կաղում է, երբեմն էլ հանդիպում են իրարից արտագրված, կրկնվող թղթապանակներ…Ռիսկերը նվազեցնելու համար պետք է ձգտել պրակտիկայի աշխատանքների կազմակերպման կատարելագործմանը»,- վստահեցնում է Վ. Սարգսյանը:

Կենտրոնի ղեկավարից փորձում եմ ճշտել, թե պաշտպանությանը ներկայացված թղթապանակում որոնք են առաջնային կարևորության համարվում: Վ. Սարգսյանը դժվարանում է առանձնացնել որևէ մեկը, բոլորն էլ կարևոր են և անհրաժեշտ՝ դասի, մասնագիտական աջակցության, պարապմունքի վերլուծությունը, փոխադարձ գնահատումները, այնուամենայնիվ, առանձնացնում է էսսեն՝ ամփոփիչ ակնարկը, որը պետք է հստակ պատկերացում տա ուսանողի կատարած աշխատանքի մասին, հիմքում, իհարկե, ունենալով ապացուցող բոլոր փաստարկները:

Գործընթացում կարևոր դեր ունեն ուսուցիչն ու մեթոդիստը: Մեթոդիստը իրականացնում, համակարգում է թիմային աշխատանքը, ամփոփում է դասը, գնահատում… Նրա լսարանային ծավալը չպետք է խանգարի պրակտիկայի համակարգմանը, ամբիոնները այս հարցում մեծ դեր ու պատասխանատվություն ունեն:

Այստեղ ևս կա ռիսկայնություն. մեթոդիստների ծանրաբեռնվածությանը զուգահեռ մեծանում է նաև պատասխանատվությունը, որը կարող է խանգարել օբյեկտիվ գնահատելու ուսանողին, որովհետև մեթոդիստները շատ հաճախ փորձում են իրենց վրա վերցնել ամբողջ պատասխանատվությունը կամ էլ գերագնահատել ուսանողի կարողությունները: «Հենց այստեղ է, որ պետք է կարողանանք պահել հավասարակշռությունը անհրաժեշտ աջակցության և սուբյեկտիվ գնահատման միջև»,- ասում է կենտրոնի ղեկավարը:

Գաղտնիք չէ, որ տարեցտարի պրակտիկայի աշխատանքների կազմակերպման նոր մեթոդներ ու ձևեր են մշակվում, և նկատելի է թե՛ ուսանողների, թե՛ ղեկավարների պատասխանատվության ու վերաբերմունքի լրջությունն այս գործընթացի հանդեպ, բուհի ղեկավարների և ուսանողների հետ համագործակցային մթնոլորտի ու աշխատանքի կազմակերպման հանդեպ դպրոցների ու կենտրոնների տնօրենների գոհունակությունը, որն ավելի է նպաստում կապերի սերտացմանը:

Գործընթացը տարեցտարի առաջընթաց է արձանագրում, որտեղ ամենակարևորը ամփոփիչ ատեստավորման մեջ պրակտիկայի գնահատականի ներառումն է:

Արդյո՞ք պրակտիկայից բարձր միավոր ստանալը երաշխիք է, որ ապագա ուսուցիչը բարձր որակներ ապահովի այս կամ այն ուսումնական հաստատությունում… Դեռևս խորհելու խնդիրներ կան, որոնք պետք է կարևորել գործընթացի կազմակերպման ընթացքում:

Վահան Սարգսյանը վստահեցնում է, որ Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ համագործակցությունը բավականին արդյունավետ էր պրակտիկայի կազմակերպման գործընթացում նորամուծություններ կիրառելու տեսանկյունից, և որ հայաստանյան բուհերի համեմատությամբ մեր համալսարանում պրակտիկայի կազմակերպմանը երեք անգամ ավելի ժամաքանակ է տրամադրվում, ինչը մեծացնում է գործընթացի հանդեպ պատասխանատվությունը:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ինֆորմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Քնարիկ Սուչյանը Գեղարքունիքի մարզի Կարմիր գյուղից է: Ուսման առաջընթացը նա լավագույնս համատեղում է կամավորական աշխատանքի հետ: Պրակտիկայի արդյունքների պաշտպանությունից նա 100 միավոր է ստացել:

«Եթե սովորում եմ, պետք է ձգտեմ առավելագույնին,-ասում է Քնարիկը: -Եթե մի բան լավ ես անում, ուրեմն պետք է կարողանաս նաև ներկայացել արածդ: Ես կարողացա լավագույնս ներկայացնել պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքս: Իմ հոգեբան մանկավարժներն էլ իրենց օբյեկտիվ վերաբերմունքն արտահայտեցին, ես գոհ եմ: Եթե ուսանողը վճարում է, պետք է նաև սովորի: Ես անվճար համակարգում եմ սովորում, և գիտելիքների անընդհատ ձեռքբերումը իմ գերխնդիրն է: Զարմանում եմ այն ուսանողների վրա, որոնք անվստահ են իրենց աշխատանքը ներկայացնելիս:

Ինչպես ամեն գործընթաց, պրակտիկայի կազմակերպումն էլ հեռու է իդեալական լինելուց, այն անընդհատ հղկվելու, կատարելագործվելու կարիք ունի»:

Քնարիկը խոստովանում է, որ մանկավարժությունը սերնդակրթության մեծ պատասխանատվություն է պահանջում, և ինքն ավելի շատ հակված է ավարտելուց հետո ծրագրավորողի աշխատանք անել: Նա վստահեցնում է՝ բուհը տալիս է այդ գիտելիքները, իսկ մանկավարժի որակների ձեռքբերումը կօգնի կյանքում: Սա մի հարթակ է, որտեղ ձեռք ես բերում գիտելիքներ ու փորձ, դա շատ լավ է:

Իմ մյուս զրուցակիցը Սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և տարրական մեթոդիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Ենոքյանն է: Նա Արարատի մարզի Արտաշատ քաղաքից է:

Պրակտիկայի կազմակերպման և արդյունքների պաշտպանության գործընթացը կարևորելով՝ Մարիամն ասաց. «Ցանկացած մասնագիտության դեպքում պրակտիկան նպաստում է մասնագիտության առանձնահատկությունների և որակական հատկանիշների բացահայտմանը: Պրակտիկայի արդյունքները պաշտպանելիս մենք կարողանում ենք ինքնավերլուծության միջոցով տեսնել մեր մասնագիտական աճը նախորդ տարվա համեմատությամբ: Մենք աշխատում ենք մանկավարժի, հոգեբանի, մեթոդիստների հետ: Պրակտիկայից առաջ անցկացվող սեմինարը բավականին նախապատրաստում է մեզ երեխաների հետ աշխատելուց առաջ: Այս տարի մեր պրակտիկան ուսումնաճանաչողական էր, և Վարդանանց կրթահամալիրում բացի հաստատության կառավարման, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների հետ ծանոթությունից, մենք անցկացրինք արտադասարանական միջոցառումներ և հետազոտական աշխատանքներ, երեխաներին ծանոթացրինք մեր համալսարանի և այլ համալսարանների թանգարանների հետ»:

Հաջորդ տարի Մարիամը և նրա համակուրսեցիներն արդեն կմասնակցեն կիրառական պրակտիկային, որը հնարավորություն է տալիս դասեր վարել: Պրակտիկայի կազմակերպումը պատշաճ մակարդակով դպրոց մտնելուց առաջ ուսանողին ինքնավստահություն է հաղորդում, օգնում տեսնել իր մասնագիտական կարողությունների թույլ և ուժեղ կողմերը և, ինչու չէ, բացահայտել նրա մեջ ապագա ուսուցչին:

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ. ՆԱ ԾՆՎԵԼ ԷՐ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լրացավ անվանի թանգարանագետ Լավրենտի Բարսեղյանի ծննդյան 80 տարին: Կան մարդիկ, որոնց երկրային կյանքն ավարտվում է, բայց նրանք շարունակում են ապրել իրենց թողած գիտական ժառանգությամբ ու գործունեությամբ:

Տարելիցի առթիվ Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում բացվեց Լավրենտի Բարսեղյանի անվան կաբինետ-լսարան, անվանի թանգարանագետի գործընկերները, հարազատներն ու բուհի դասախոսները համալսարանի թանգարանում դիտեցին վերջինիս նվիրված ցուցադրությունը, որից հետո անցկացվեց «Հայոց պատմության ու մշակույթի նվիրյալը» խորագրով գիտաժողով:

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանն իր ելույթում ընդգծեց, որ պրոֆեսոր Լ. Բարսեղյանի հիմնած թանգարանները որպես երևույթ հայ հասարակական կյանքում մինչ օրս բացառիկ են իրենց նշանակությամբ:

«Նրա հետ աշխատելը հեշտ չէր, բայց հենց դա էր նրա գործի հաջողության բանալին»,-ասաց ռեկտորը:

Լ. Բարսեղյանի կյանքի ու գործունեության հետ կապված զեկուցումներ ու սրտառուչ հուշեր ներկայացրին ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի վարիչ Աշոտ Փիլիպոսյանը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության» տնօրեն Արա Թարվերդյանը, ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական Սերժիկ Առաքելյանը, աշխատանքային ընկեր Նորա Դայանը, տարբեր տարիների աշխատանքային ընկերներ և ուսանողներ, ովքեր արժևորեցին նրա մեծ ներդրումը հանրապետության պատմամշակութային ոլորտի, մասնավորապես թանգարանագիտության զարգացման գործում:

Մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Ալվարդ Գրիգորյանը հանդես եկավ «Լավրենտի Բարսեղյանի թանգարանագիտական գործունեությունը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում» զեկուցումով:

«Ժամանակակից թանգարանագիտության բնագավառում Լավրենտի Բարսեղյանի ավանդն անգնահատելի է,-ասաց Ա. Գրիգորյանը:-Ուշադրության կենտրոնում ունենալով Հայաստանի ազգագրության պետական թանգարանի կազմակերպումը՝ Լ.Բարսեղյանը կարևորեց նաև բուհական թանգարանի անհրաժեշտությունը և այդ գործում համալսարանական թանգարանների դասական սկզբունքի կիրառումը՝ բուհական դասավանդման գործընթացը արդյունավետ և բազմակողմանի իրականացնելու համար օգտագործել բնօրինակ հավաքածուներն ու արխիվային փաստաթղթերը: Այդպես նա կազմակերպեց Մ. Հերացու անվան բժշկական ինստիտուտի թանգարանը:

Լ. Բարսեղյանն առանձնահատուկ վերաբերմունք ուներ ուսանողների հանդեպ և իր գործունեության ընթացքում մշտապես կարևորել է երիտասարդների մասնագիտական պատրաստումն ու երիտասարդ կադրերին օժանդակելը: Դեռևս Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանի տնօրենի պաշտոնավարման տարիներին նա Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության բաժնի ուսանողների համար կազմակերպում էր վարպետաց դասեր, որոնք հետաքրքիր և ուսանելի էին ոչ միայն ուսանողների, այլ նաև ամբիոնի դասախոսների համար:

2007 թվականից Լավրենտի Բարսեղյանը անցավ դասախոսական աշխատանքի, իսկ հետագայում ղեկավարեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության ամբիոնը:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հանրապետության համար թանգարանագիտական կադրեր պատրաստող առաջատար բուհն է, Բարսեղյանը կարևորեց ուսումնական ծրագրերի վերանայումն ու արդիականացումը: Կարճ ժամանակում նրա ղեկավարած ամբիոնը համալրվեց նոր մասնագետներով: Թանգարանագիտական կրթության շրջանակներում նա մեծապես կարևորում էր թանգարանային մանկավարժի պատրաստումը և թանգարանների հսկայական կրթական ներուժը ներկայացնելը:

Լ. Բարսեղյանը հիմնեց կաբինետ, որի գրադարանը համալրեց արժեքավոր մասնագիտական գրականությամբ, տեխնիկական միջոցներով, ինչը հնարավորություն տվեց ուսուցումը կազմակերպել արդիական մեթոդներով: Թանգարանագիտության ամբիոնին կից Լ. Բարսեղյանը իրականացրեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի ստեղծման գործը:

Համալսարանի պատմության ֆակուլտետում դասախոս, հնագետ Վարշամ Ավետյանի կողմից կազմակերպված կաբինետի նյութերի հիման վրա 2004 թվականին ստեղծվեց թանգարան, իսկ 2010 թվականին համալսարանի նորանշանակ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը որոշեց թանգարանում ստեղծել հայկական մանկավարժության պատմության, ինչպես նաև համալսարանի հարուստ ավանդույթները ներկայացնող ցուցադրություն, որպեսզի մեր ուսանողները և բուհի հյուրերը տեղեկանան համալսարանի պատմությանը և գործունեությանը սկզբնավորումից մինչև մեր օրերը:

Լ. Բարսեղյանի ակտիվ աշխատանքը և օգտակար խորհուրդները նպաստեցին, որ 2012թ. նոյեմբերի 19-ին, բուհի հիմնադրման 90 ամյակի առթիվ բացվի մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի ներկայիս ցուցադրությունը: Թանգարանն այսօր ակտիվ գործող կրթամշակութային կենտրոն է, որն իրականացնում է տարաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ տարբեր տարիքի լսարանների համար և ակտիվորեն համագործակցում է նման գործունեություն ծավալող մի շարք հաստատությունների հետ»:

Թանգարանագետի կինը ըմբռնումով է մոտեցել ամուսնու հանրային բազմազբաղ գործունեությանը՝ փորձելով չխանգարել նրան: Տարիների հեռվից նա սիրով ու ջերմությամբ է հիշում Սարդարապատի ճակատամարտի, այժմ Ազգագրության թանգարանի բացման հետ կապված աշխատանքային լարվածությունը: Իսկ երբ Դսեղում Թումանյանի տուն-թանգարանը բացումից առաջ հրդեհվեց, նա տագնապի մեջ էր, մինչև մեկնեց Դսեղ և մեկ շաբաթվա ընթացքում կարողացավ տարբեր մարդկանց ու կազմակերպությունների ներգրավմամբ վերականգնել այն:

Որ թանգարանում էլ Լավրենտին աշխատել է՝ մեծ նվիրում ու սեր է դրել այդ աշխատանքում: Նա ծնվել էր թանգարաններ ստեղծելու համար, և դա նրա մեծագույն առաքելությունն էր:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՏԵՂԻՆ ԵՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Մանկավարժական համալսարանում 2017 թվականի դեկտեմբերի 11-22-ը անցկացված վերապատրաստման հերթական դասընթացներին մասնակցած Բանասիրական ֆակուլտետի դասախոսներին մասնակցության հավաստագրեր հանձնեց ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Համալսարանի պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը հանդիպման սկզբում ներկայացրեց, որ վերապատրաստումների դասընթացների ամփոփման արդյունքում վերլուծվել են գործընթացի ուժեղ, թույլ և ռիսկային կողմերը՝ դրանք հետագա դասընթացների կազմակերպման ընթացքում հաշվի առնելու նկատառումով:

ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը խոսեց մասնագիտական վերապատրաստումների դասընթացների կազմակերպման գործընթացի մասին, որը օրենքի պահանջն է, և բուհում փորձում են պատշաճ մակարդակով կազմակերպել: Ռեկտորը խոսեց գործընթացի կազմակերպման անհրաժեշտության մասին հատկապես բարձրագույն կրթության օրենքում փոփոխությունների իրականացման ժամանակահատվածում, քանզի նոր կրթական համակարգին անցնելու պայմաններում որոշակի ունակություններ չունենալու դեպքում խնդիրներ կառաջանան: Այս տեսանկյունից վերապատրաստման դասընթացները տեղին են և անհրաժեշտ:

Ռեկտորը դասախոսներին առաջարկեց ներկայացնել, թե որքանով են օգտակար և արդյունավետ վերապատրաստման դասընթացները մասնագիտական նոր մոտեցումների ներբացահայտման տեսանկյունից:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը, որ ինքն էլ վերապատրաստող է, իր գոհունակությունը հայտնեց և փաստեց, որ նոր թեմաներ ներկայացվեցին նոր մոտեցումներով: Պրոֆեսորի կարծիքով գիտելիքներն անընդհատ պետք է նորացվեն, դասախոսները պետք է տեղեկացվեն հարակից գիտաճյուղերի փոփոխությունների մասին:

Ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը խոսեց գործընթացի կազմակերպման մասին՝ ընդգծելով, որ ընտրված էին լավագույն վերապատրաստողները, իսկ թեմաները բավականին արդիական էին: Դեկանը հավելեց նաև, որ գոհ են մանկավարժության վերապատրաստումներից, սակայն թեմաների մեջ կարելի է ավելի ծանրակշիռ տեղ հատկացնել մանկավարժական մեթոդաբանությանը:

Ելույթ ունեցող մյուս դասախոսները հանդես եկան մասնագիտական վերապատրաստման դասընթացներին առնչվող տարբեր առաջարկություններով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ԵՍ ՉԱՓԱԶԱՆՑ ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ ԵՄ»,-

ասում է Մերի Վերմիշյանը

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» թերթի հյուրն է ՀՊՄՀ Հատուկ կրթության ֆակուլտետի Լոգոպեդիա մասնագիտության հեռակա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Վերմիշյանը: Մերին ծնվել է Լոռու Ստեփանավան քաղաքում, այժմ ապրում է Երևանում:

- Մերի, ի՞նչ նկատառումով ընտրեցիր հեռակա համակարգի ուսումնառությունը:

- Հեռակա համակարգն ընտրեցի, որպեսզի հետագայում կարողանամ ուսմանը զուգահեռ աշխատել:

- Ի՞նքդ ես ընտրել մասնագիտությունդ…

- Այո, ես եմ ընտրել, մեր ընտանիքի ծանոթներից մեկը, որ արդեն կայացած լոգոպեդ էր, ինձ պատմեց այդ մասնագիտության առանձնահատկությունների մասին, և մասնագիտությունն ինձ միանգամից գրավեց:

- Այնպիսի կարծիք կա, թե շատերը հեռակա համակարգ ընդունվում են միայն դիպլոմ, ոչ թե գիտելիքներ ստանալու համար: Դա ճի՞շտ է: Ինչպիսի՞ն է ձեր կուրսի ուսանողների ձգտումը ուսման հանդեպ:

- Նույն խնդիրը նաև առկա ուսուցման համակարգում կա. ով ձգտում ունի՝ սովորում է, կան նաև սովորելու ցանկություն չունեցող, հետևաբար և չսովորող ուսանողներ: Մեր կուրսում ուսանողների մեծ մասը ձգտում է լավ սովորել, առավելագույն գիտելիքներ ստանալ, որովհետև շատերը միաժամանակ աշխատում են որպես լոգոպեդներ:

- Քո ծննդավայրում լոգոպեդը պահանջվա՞ծ մասնագետ է…

-Կարծում եմ այո, որովհետև և՛ քաղաքային պոլիկլինիկայում, և՛ հմ. 3 ավագ դպրոցում, որտեղ սովորել եմ, լոգոպեդներ են աշխատում և այդ մասնագետների կարիքն անպայման կա:

-Ինչպե՞ս ես սովորում, կարճ և սուղ ժամանակահատվածը բավարարո՞ւմ է անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանը, թե՞ ինքնակրթությամբ ես լրացնում բացը…

-Լավ եմ սովորում, ձգտում եմ ստանալ առավելագույնը, որովհետև սովորելու մեծ ցանկություն ունեմ, բայց կարծում եմ առկա համակարգում իմ ուսումնառությունն ավելի արդյունավետ կլիներ: Հավելեմ նաև, որ մեկ ամիս տևողությամբ դասընթացի ժամանակահատվածում այնքան ծավալուն նյութեր են մեզ տրվում, որ պարզապես հնարավոր չէ չսովորել:

-Բակալավրիատից հետո շարունակելո՞ւ ես կրթությունդ ՀՊՄՀ մագիստրատուրայում:

-Այո, անպայման շարունակելու եմ Մանկավարժական համալսարանում, որոշել եմ ընտրել այն մասնագիտությունը, որը թույլ կտա աշխատել նախադպրոցական տարիքի երեխաների հետ: Ես շատ եմ սիրում երեխաներին և հենց նախադպրոցական տարիքից պետք է աշխատել տարբեր խանգարումներ ունեցողների հետ՝ դրանք շտկել կարողանալու հույսով ու գիտակցությամբ: Հենց դրանով են պայմանավորված մասնագիտական նախասիրություններս:

-Մանկավարժական համալսարանն ունի դասախոսական հետաքրքիր ու հմուտ ներուժ: Ինչպիսի՞ն են քեզ դասավանդողները: Նրանց տված գիտելիքները բավարարո՞ւմ են ժամանակակից ուսանողին…

- Մենք ունենք հիանալի, լավ դասախոսներ, որոնք սիրով են փոխանցում իրենց գիտելիքները և մեզ ծանոթացնում են մասնագիտական կրթության ժամանակակից մոտեցումներին. Գ. Հովյանի, Ա. Կիրակոսյանի, Է. Թադևոսյանի և մյուս բոլոր դասախոսների տված դասերը մեզ համար դեպի մասնագիտությունը տանող ճանապարհի հիմնաքարերն են…

-Ինչպիսի՞ն է քո և համակուրսեցիներիդ հասարակական ակտիվությունը համալսարանում…

-Թերևս մեր մեղքով չէ, որ մենք՝ հեռակա համակարգի ուսանողներս չենք ընդգրկվում հասարակական աշխատանքներում կամ ուսանողական կազմակերպության մեջ:

-Բուհում մեծ դեր ու նշանակություն է տրվում ուսանողների պրակտիկաներին: Դո՞ւ էլ ես կարծում, որ դա խիստ անհրաժեշտ է մասնագիտական գործունեությունից առաջ:

- Իհարկե: Որքան էլ շատ լինեն տեսական գիտելիքներդ, պրակտիկան իմաստավորում է դրանք: Առաջիկա անցնելիք պրակտիկան ինձ թվում է կտա նաև ինքնավստահություն սեփական ուժերիս և ընտրածս մասնագիտության հանդեպ: Իսկ մինչ այդ ես չգիտեմ, թե երեխայի հետ ինչպես պետք է աշխատեմ, ինչից սկսեմ…Միայն տեսական գիտելիքները բավարար չեն: Պրակտիկան կտա շատ հարցերի պատասխանները:

- Արդյո՞ք ձեզ չեն ծանրաբեռնում լոգոպեդի համար այնքան էլ ոչ էական առարկաների ուսուցմամբ:

- 2-րդ և 3-րդ կուրսերում անցնում էինք մաթեմատիկա, լավ առարկա է, բայց ծանրաբեռնված էինք, և այն ինչ-որ չափով խլում էր մասնագիտական առարկաներով զբաղվելու ժամանակից…

- Այսօր աշխատաշուկայում մրցունակ կադրեր են պետք, որքանո՞վ ես մրցունակ մասնագիտությամբ աշխատանք գտնելու համար…

- Ուսումնառությանս զուգահեռ փորձում եմ մասնագիտական տեղեկություններ ստանալ տարբեր աղբյուրներից, այսինքն չբավարարվել ձեռք բերածով…Ավարտելուց հետո պետք է ձգտեմ անպայման աշխատել մասնագիտությամբ…

- Ինչպե՞ս կբնութագրես քո սերնդի երիտասարդությանը:

- Այսօրվա երիտասարդության մտածելակերպն ինձ երբեմն անհասկանալի է. մի մասը ձգտում է դեպի արտերկիր, մյուս մասի ձգտումներն անհասկանալի են… Որքան էլ զարմանալի թվա, ես նախընտրում եմ ավելի շատ շփվել ավագ սերնդի մարդկանց հետ:

- Իսկ ինչպիսի՞ն ես դու:

- Ես չափազանց նպատակասլաց եմ, միշտ հասնում եմ իմ առջև դրած նպատակներին: Բայց հաճախ ավելորդ հուզմունքը խանգարում ու շփոթեցնում է ինձ, հատկապես քննասեղանի մոտ:

- Ի՞նչն է քեզ ամենից շատ անհանգստացնում:

- Այն իրավիճակը, որ ծնողների սխալների արդյունքում ծնվում են հատուկ կարիքներով ու տարբեր խանգարումներով երեխաներ…Նրանց թիվը գնալով ավելանում է…Դա ինձ ոչ միայն անհանգստացնում է, այլև տխրություն ու ցավ է պատճառում:

- Ներառական կրթությունը փորձում է այդպիսի երեխաների կյանքի որակը փոխել…և ինչ-որ տեղ դա հուսադրում է…

- Այո, և ես ուրախ կլինեմ, եթե կարողանամ աշխատել խոսքի խանգարում ունեցող երեխաների հետ, արդյունք ստանամ, որն ինձ մեծ բավականություն կտա: Երեխաները մեղավոր չեն, որ ծնվել են տարբեր խանգարումներով՝ խոսքի, հենաշարժողական և այլն…Պարզապես պետք է սիրել նրանց և նրանց հնարավորինս ներառել հասարակության մեջ:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ. «ԱՐԱՐՈՒՄ»



Տարին խորհրդանշական էր՝ հայազգի աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակի առումով, ՅՈՒՆԵՍԿՕ-ն այն ընդգրկել է 2017 թվականի հիշարժան տարեթվերի ցանկում:

Հայաստանում մշակութային իրադարձություն էր սեպտեմբերից հունվար հանրահռչակ ծովանկարչի հոբելյանին նվիրված ցուցահանդեսը Երևանում, որ կրում էր «Արարում» խորագիրը: Ցուցահանդեսում ներկայացվեցին Հայաստանի տարբեր թանգարանների հավաքածուների նկարները՝ 52 գեղանկարչական, 26 գրաֆիկական, 1 դեկորատիվ-կիրառական և 20 վավերագիր աշխատանքներ: Հայաստանում առաջին անգամ ցուցադրվեց նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության «Քառս. Աշխարհի արարում» հանրահայտ կտավը:

Նկարիչը վրձնել է ավելի քան 6000 կտավ՝ հիմնականում ծովանկարներ, որոնք պահվում են աշխարհի լավագույն թանգարաններում՝ Լուվրում, Էրմիտաժում, մասնավոր հավաքածուներում: Նկարչի թողած արվեստի ժառանգության մի փոքր մասը ցուցադրվեց Երևանում, սակայն այցելուների ու արվեստասեր հասարակայնության համար այն արվեստի իսկական տոն էր:

Հայաստանի ազգային պատկերասրահի Այվազովսկու հավաքածուն, որը համարվում է երկրորդը Թեոդոսիայից հետո, ստեղծվել ու համալրվել է բացառապես նվիրատվությունների շնորհիվ: Առաջին նկարները բերվել են Մոսկվայի Լազարյան ճեմարանից, այնուհետև հավաքածուն համալրվել է բարերարների նվիրատվություններով:

Հովհաննես Այվազովսկին ծնվել է 1817 թվականին Ղրիմում՝ Թեոդոսիա քաղաքում: Թեոդոսիայի հայկական եկեղեցու ծննդյան և մկրտության մատյանում Այվազովսկու ծնունդը գրանցված է՝ Գևորգ Այվազյանի որդի Հովհաննես: Նկարչի նկարներից մի քանիսը կրում են այս ստորագրությունը՝ «Հովհաննես Այվազյան»:

Հանճարեղ ծովանկարիչը վախճանվել է 1900 թվականին: Նա թաղված է Թեոդոսիայում՝ հայոց միջնադարյան Սուրբ Սարգիս եկեղեցու բակում:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Մանկավարժական Համալսարանի երեք ուսանողների շնորհաւորանքը Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ, արձակագիր Ռոպէր Հատտէճեանի ծննդեան օրուայ առթիւ, որը մի քանի ամիս առաջ նշել է նաեւ իր խմբագրապետութեան 50 ամեակը:
Շնորհաւորանքը լոյս է տեսել օրաթերթի 2018 թ. Յունուարի 22-ի համարում:

ՀԻԻՍՈՒԱԾ ԱՌԱՍՏԱՂ ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆԻ ՀԱՄԱՐ

Համարձակւում ենք դիմել Ձեզ հենց այսպէս՝ սիրելի՛ Պրն. Ռոպէր,

Դրա իրաւունքը տալիս են Ձեր «Յուշատետր»-ի ծովածաւալ հատորները, Ձեր ստեղծագործութիւնների գրութեան հաղորդական ոճը, որ երկխօսութեան գրաւիչ դաշտ է, իմացական անսպառ աղբիւր մեզ պէս ընթերցողների համար: Վերջապէս դրա իրաւունքը մենք ակամայ ստացանք մեր սիրելի դասախօս, Պրոֆեսոր Սուրէն Դանիէլեանից, որի շնորհիւ մեզ համար բացուեց գրական նոր սահման- «առաստաղ»՝ Ձեր երկհատոր «Առաստաղ» վէպի հմայքը: Այն անցագիր է դէպի Ձեր ներաշխարհը, այն Ձեր ու մեր ընթերցող, ստեղծագործող սերունդների միջեւ վստահելի կապի յուսալի կամուրջ է, որի վրայով մենք հասնում ենք Ձեր անհատականութեան, Ձեր փիլիսոփայութեան, այսինքն՝ Ձեր գրական միջնաբերդի մատոյցները:

Եւ մենք, սիրելի՛ Պրն. Ռոպէր, անմնացորդ սիրահարուած ենք Ձեր գրականութեան հոգեվերլուծութեան բարձր շնորհին, աշխարհատեսութեանը, մասնաւորապէս Ձեր վէպի հերոսների յոյզերին, գործողութիւններին, մտածողութեան ծալքերին, ինչու չէ, նաեւ նրանց վիպական քայլերին, թէկուզ երբեմն անսպասելի կամ անմեկնելի արարքներին տրուած Ձեր բնութագրող, կողմնորոշիչ գնահատականներին:

Նախ, ովքե՞ր ենք մենք. երեք պարզ, բայց ուսումնատենչ ուսանողուհիներ՝ Հայաստանի տարբեր շրջաններից, սովորում ենք Խ. Աբովեանի ան. Հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական բաժանմունքի մագիստրոսական երկրորդ լսարանում: Մէկ տարի անց աւարտելու ենք ու ստանալու մագիստրոսի գիտական առաջին աստիճանով բարձրագոյն վկայագրեր: Սիրում ենք գրականութիւնը, սիրում ենք մեր լեզուն, որը Դուք արեւմտահայ աւանդոյթի ուժով կոչում էք Մեծասքանչ:

Գրականութեան ու լեզուի թովչանքի մէջ մենք սիրում ենք այն, ինչն անծանօթ է, այն, ինչը բարձրերում է, թերեւս՝ անհպելին: Մեր դասախօսի շնորհիւ գրական բարձրերում գտել ենք Ձեր ներաշխարհը, Պրն. Ռոպէր, որը չափանիշի առաստաղ է դարձել մեզ համար եւ ուղեկցելու է մեզ ողջ կեանքում, ուր էլ որ լինենք: Այդ առաստաղը թոյլ չենք տայ որ փշրուի, ինչպէս որ ձգտում ենք մեր հոգու անձաւներում եւ լեզուի քիմքերի վրայ պահել Սփիւռքի եւ մեզ համար սրտի դող դարձած Արեւմտահայերէնը, ինչպէս որ յուշել էք Դուք «Առաստաղը» վէպում:

Միանգամից ասենք, որ մեզ համար ուսանելի են Ձեր վէպի երեք առանցքային տիպարները, երեք սերունդ՝ անանուն ծերունին, որը մեր անցեալն է խորհրդանշում, դուստրը՝ Սաթենիկը, մեր ծնողների խորհրդանիշը, եւ օտարանալու շեմն արդէն անցած, հայաշխարհից մէկընդմիշտ փրթած, բայց դեռ մերը մնացած Ռուբիկը, մե՛ր սերնդակիցը: Նրանք ամբողջացնում են նոր ժամանակների տխրամած աշխարհընկալումը, բացայայտում ազգային կեցութեան եռափեղկ պատուհանները:

Ու այսօր, սիրելի՛ Պրն. Ռոպէր, Ձեր ծննդեան այս հրաշալի օրը, կարող ենք վստահաբար հաստատել, խաղարկելով Ձեր խորապէս մշակած խորհրդանիշները, որ ամէնից պայծառ շողում է Ձեր աստղը, բայց ոչ իբրեւ «ապրելու դատապարտուածութիւն», որը մենութեան ցաւի վկայութիւն է թւում, այլ իբրեւ գոյապաշտութիւն, ապրելու բերկրանքի իմաստաւորում:

Շնորհակալութի՛ւն, որ Դուք կաք: Մեր գրող-ընթերցող երկխօսութիւնը, Պրն. Ռոպէր, հաւատացէք, սկսուած է ու յարատեւելու է, դառնալու է շարունակական՝ լինի մեծ քաղաքներում ու գիւղերում, Պոլսում, Կանադայում թէ Հայաստանում, որտեղ ճամբայ է հարթում Ձեր գիրքը, որտեղ ԱՌԱՍՏԱՂԸ երբեք չի անհետանում, որքան էլ, ինչպէս դիպուկ նկատել էիք Դուք, ամէն մէկս մենութեան կսկիծ, այնուհանդերձ, ունենում է:

Դուք Ձեր գրքով վերամիաւորում էք մեզ:

Դուք պարզում էք մեզ բոլորիս համար ազգային մեր միասնական առաստաղը:

Մենք տեղաւորւում ենք այնտեղ, ինչպէս որ կանք՝ կեանքում թէ մեր այս նկարում, որ ներկայացնում ենք Ձեզ:

Եւ տեղաւորւում ենք Ձեզ հետ, Ձեր կողքին:

Սիրելի՛ Պրն. Ռոպէր, այս ամէնն ընդունէք իբրեւ սիրոյ խոստովանութիւն եւ ծննդեան օրուայ անակնկալ, բայց անպաճոյճ շնորհաւորանք:

Երէկ դեռ անծանօթ, իսկ այսօր արդէն
Ձեր առաստաղի տակ բոլորուած՝
Նելլի Թադէոսեան, Լիանա Մերիխանեան, Անահիտ Միքայէլեան

Երեւան, 20 Յունուար, 2018

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Վռամի Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության մեծ մասը կապված է եղել Խաչատուր Աբովյանի անունը կրող մանկավարժական կրթօջախի հետ: Մի քանի տասնամյակ մանկավարժ գիտնականն իր ներդրումն է բերել մանկավարժության ոլորտին՝ ստեղծելով կենսաբանության իր դպրոցը, որտեղ կրթել է մանկավարժների տարբեր սերունդների՝ կիսելով նրանց հետ տարիների իր փորձը, հմտություններն ու ձեռքբերումները:



Պրոֆեսոր Լ. Վ. Հարությունյանը հեղինակ և համահեղինակ է շուրջ 50 մենագրության, որոնք սեղանի գիրք են մասնագետների համար, իսկ «Ընդհանուր էկոլոգիա» երկհատոր գիրքը և «Բնության պահպանության հիմունքները» մենագրությունը միակ ուսումնական ձեռնարկներն են Հայաստանի բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների համար, հրատարակել է 300 գիտական և շուրջ 500 գիտահանրամատչելի աշխատանք:

Պրոֆեսոր Հարությունյանի անունը լայնորեն հայտնի է և՛ Հայաստանում, և՛

Նա կդառնար 90 տարեկան

«Ես արեցի, ինչ կարող էի, թող ուրիշներն ավելին անեն»
Լևոն Հարությունյան

Լևոն Վռամի Հարությունյանը ծնվել է 1927 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանի Տավուշի մարզի Դժովուզ գյուղում: Հայրը մանկավարժ էր, մայրը՝ տնային տնտեսուհի: 1944 թ. ավարտել է Գյումրիի №10 միջնակարգ դպրոցը, ավարտելով գյուղատնտեսական տեխնիկումը՝ 1948 թ. ընդունվել է հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետը և 1953 թ. գերազանցությամբ ավարտել այն: Եղել է ակադեմիկոս Մ. Գ. Թամանյանի անվան առաջին թոշակառուն: 1958 թ. ընդունվել է Հայաստանի ԳԱԱ ասպիրանտուրան, «Դենդրոլոգիա» մասնագիտությամբ: 1961 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 1970 թ.-ին պաշտպանել դոկտորական ատենախոսություն: Կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանով 1978 թ. մրցույթով ընտրվել է Խ. Աբովյանի ՀՊՄ ինստիտուտի գյուղհիմունքների ամբիոնի վարիչ: 1983 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1995 թ. նշանակվել է ինստիտուտի բուսաբանության և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, այնուհետև ընտրվել կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխատել է որպես նույն ամբիոնի պրոֆեսոր:

Պրոֆեսոր Լևոն Հարությունյանը առաջատար մասնագետ էր «Դենդրոլոգիայի և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտության ոլորտում: Նա հանրաճանաչ մասնագետ էր էկոլոգիայի, շրջակա միջավայրի պահպանության հարցերի, ֆիտոթերապիայի ոլորտներում: Ճանաչված լրագրող և հրապարակախոս էր: Ավելի քան 55 տարի նա մեծ ծավալի և արգասաբեր աշխատանք է կատարել ցամաքային կլիմա ունեցող երկրների անտառապատման և կանաչապատման գիտական հիմունքները մշակելու, հանրապետության համար պատրաստել է բարձր որակավորման կադրեր, մշտապես օգնություն է ցուցաբերել նախագծող և կանաչապատող կազմակերպություններին: Բազամամյա և բեղմնավոր հետազոտությունների շնորհիվ Լ. Հարությունյանի կողմից ստացվել են տեսական և գործնական նշանակությամբ մի շարք չափազանց արժեքավոր տվյալներ ծառաթփային բույսերի ներմուծման, կլիմայավարժեցման, կանաչապատման ու անտառապատման պրակտիկայում:

Հայաստանի սահմաններից դուրս: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել տարբեր միջազգային կոնգրեսների, հանդես է եկել զեկուցումներով ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանյան երկրներում, եղել է մի շարք գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների անդամ:

Պրոֆեսորի աշխատանքը գնահատվել է. նա արժանացել է Ոսկե մեդալի (ԱՄՆ), «Նշանավոր մարդիկ» համաշխարհային հանրագիտարաններում, 2003 թ. ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Անանիա Շիրակացու» մեդալով:

Նա անփոխարինելի դասախոս էր, հմուտ մանկավարժ: Օժտված էր նուրբ հումորի զգացումով, ամենալուրջ գիտական հիմնախնդիրների լուծման պահին կարող էր սրամտել, բանավիճել դիմացինի հետ գրագետ ու բովանդակալից, սուր և դիպուկ, սրտագիր խոսքով հաղորդակցվել: Նա ուներ ուսանողներին ճանաչելու և գնահատելու մանկավարժական տաղանդ, ստեղծում էր փոխըմբռնման ու վստահության մթնոլորտ, կարող էր համոզել և որ շատ կարևոր է՝ համարձակորեն ընդունել սխալը:

Առհասարակ լավատես էր և կենսուրախ՝ չնայած կյանքում ունեցած դժվարություններին, միշտ գոհ էր իր ունեցածից: Հրաշալի հայր էր և ամուսին: Գերմանական դասական գիտնականների նման նա ուներ ապրելու և աշխատելու իր կերպը: Այդ ընդհանրությունը կարելի է բնութագրել երկու բառով՝ հանրագիտարանային ընդգրկում: Այո՛, յուրօրինակ էնցիկլոպեդիստ էր, որը և հրաշալի նկարում էր (դեղաբույսերի նկարները), պաշտում էր և լսում դասական երաժշտություն:

Չեխովյան հայտնի տողերը չափազանց վայել են նրան. «Մարդու մեջ ամեն ինչ գեղեցիկ պետք է լինի»: Նրա խոսքերում երբեք չէիր գտնի նախանձի ու քենի նշույլ անգամ, թեև առիթներ ունեցել է սրտնեղելու: Նա ապրեց սկզբունքներով, որդեգրած իր նշանաբանով ոչ թե իբրև ձևական կաղապար, այլ ոգի ու էություն, գիտակցված սկզբունք ու կենսակերպ: Միաժամանակ դառնորեն էր տանում մեր բնապահպանության պրոբլեմները և ջանք ու եռանդ չէր խնայում ի պաշտպանություն մեր կանաչ բարեկամների:

Նրա կյանքը իսկական վազք էր, անավարտ մարաթոն...

Ալետա ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ՖԵԼԻՔՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լրագրող, բանաստեղծ Ֆելիքս Պետրոսյանը Մանկավարժականի Բանասիրական ֆակուլտետն ավարտեց 1969-ին: Հետո լրագրողի իր աշխատանքին անցավ հեռուստատեսությունում, մինչև ...իր եղերական մահը:

1973-ին 3000 օրինակ տպաքանակով լույս տեսավ նրա բանաստեղծությունների «Սպասումներ» ժողովածուն:

Ֆելիքսը նկատելի ուսանող էր, գրական ստուդիայի ակտիվիստներից, դեռ ուսանողական օրերից պարբերաբար տպագրվում էր «Ավանգարդ» թերթում:

Իրենց կուրսի վերջին զանգին Ֆելիքսը մի ընդարձակ տեքստ ուներ՝ ծոն դասախոսներին, որ կարդաց սիրով: Բանաստեղծական շնչով նա գեղեցիկ խոսքեր էր ծոնել Մանկավարժականի վաստակաշատ դասախոսներ Արշալույս Բաբայանին, Աշոտ Աբրահամյանին, Վաղարշակ Քոսյանին, Արծրուն Բաղդասարյանին, Վաչե Պարտիզունուն: Այդ միջոցառմանը Ֆելիքսը դասախոսներին դիմեց Մանկավարժ հավաքական անունով և ներկայացրեց նաև իր մի բանաստեղծությունը՝ նվիրված ուսուցիչներին, որը հետո, ու նաև հիմա էլ, դպրոցական հանդեսներում և վերջին զանգերին աշակերտների ասմունքի բաղկացուցիչ մասն է, ուսուցիչներին ուղղված նրանց շնորհակալության խոսքը՝ Ֆելիքսի բանաստեղծության տեսքով:

Ես այն սիրով ուղարկում եմ «Մանկավարժական համալսարան» թերթին՝ վստահ, որ համալսարանի ուսանողներն այն իրենց հետ ունենալու են, երբ որպես մանկավարժ մտնեն դպրոցներ և իրենց սաների բերանի խոսքն են դարձնելու հանդեսներին, հանդիպումներում ու վերջին զանգերին: Ահավասիկ, այդ բանաստեղծությունը:

Սիրով՝ նախկին մանկավարժականցի
Հովհաննես Պապիկյան:

ՉՈՒՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿ

Բարի առավոտ, իմ լավ, իմ անգին...
Նամակ եմ գրում այս էլ երևի մեկ միլիոն անգամ
Ու չեմ ուղարկում ինչ-ինչ պատճառով.
Տառերն այն չեն, մտքերն այն չեն
Եվ, ընդհանրապես, նամակն էլ այն չէ,
ինչ ես կուզեի...
Գիտե՞ք, ուսուցիչ,
Դեռ Ձեր անունը լրիվ չգրած՝
Թուղթս հեղվում է գարնան արևով,
Աչքերիս առաջ տողը փոխվում է
ձնհալի գինով բուրող ակոսի,
Որի պռնկին ոչ այս և ոչ այն՝
ձնծաղիկները հյուսում են տառեր...
Այբ...
Բեն...
Գիմ... Դա...
Հետո, ուսուցիչ,
Անցած մանկության հուշերիս ձորը
Լցվում է առվի մեղմիկ կարկաչով,
Ու սարալանջի մանուշակների
կապույտ շուրթերից
իր տոտիկներին նեկտար է բառնում
լուսաբացի մեջ թաթախված մեղուն...
Այդ մեղուն ես եմ:
Ես, որ տեսիլքի և կամ հրաշքի չեմ էլ հավատում,
Դեռ Ձեր անունը լրիվ չգրած՝
Անձս գտնում եմ Ծիր-Կաթնի աստղոտ խաչմերուկներում:
Դուք հայտնվում եք ուղեցույցի պես,
Կանաչ լույս վառում հայացքով ջերմիկ,
Ու ես գնում եմ՝ մոլորակների երգը բերելու,
Որ զարմանալի վերնագիր ունի.
Այբ, բեն, գիմ, դա...:
Ես իմ գոյությամբ պարտական եմ Ձեզ,
Իմ լավ, իմ անգին...
Եվ որովհետև այդ պարտքի չափը
չեմ կարող գրել և ոչ մի թվով,
Եվ որովհետև չի էլ հաջողվի որոշել գինը
Լեզու տվողի,
Ուստի նամակ եմ գրում հիմա Ձեզ
այս էլ երևի մեկ միլիոն անգամ,
Եվ այդ նամակը դպրոց գնացող որդուս տետրի մեջ
նույն հրաշագործ սկիզբը ունի...
Այբ...
Բեն...
Գիմ... Դա...

ԱԼՊՈՄԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Արշավիր Գաբուճյանի «Դուն և ես» խոհագրությունից

Ալպոմի մը պատմութենէն ծնան այս յուշերս, յուշեր, որոնք սև ու սպիտակ և գունաւոր նկարներու պէս կը շօշափեմ ահա: Մանկութեանս լաւագոյն յիշատակները կապուած են հին լուսանկարներու հետ. լուսանկարներ՝ անխնամութենէն իրար գրկած, մոռացութենէն իրար փարած, զետեղուած արկղերու մէջ՝ օր մը զգեստապահարանի վերևը, օր մը անկողնի տակ, մէկ այլ օր՝ դարակներու վրայ:

Մեծ հայրերս, մեծ մայրերս, ծնողներս, քոյրս, եղբայրս են այնտեղ, ես ալ կամ... Ժամեր ու օրեր եմ անցուցեր այդ լուսեղէն նկարներու հետ, խօսեր ու խօսեցուցեր եմ, բարկացուցեր եմ մօրս՝ իրեն «գործ» բանալու համար, որովհետև յետոյ ինքն էր հաւաքելու ու դասաւորելու այդ բոլորը և կրկին «գանձատուփ» ուղարկելու: Մինչև այսօր ալ կը հիանամ անոնց յարգանքի ու խոնարհութեան արտայայտութեամբ, լռութեան տրոփով, վայելչութեան հրաշալիութեամբ ու հրաշալի տիրականութեամբ: Մանրամասնօրէն եմ քննած մեծերու տօնական հանդերձանքը, մեծ հօրս գրպանի ժամացոյցը, հեղինակաւոր ձեռնափայտը, մեծ մօրս սևազգեստ նազելի հրաշագեղութիւնը՝ սև գլխաշորով պարուրուած, 1950-ականներու մոտայիկ պապաս (մենք զինք միշտ կոչած ենք ու կը կոչենք հայրիկ), մաքրաբար հարսնացած մամաս, քնքշութեանս ու հոգատարութեանս ենթակայ իմ կենսամասերը՝ սևուլիկ քոյրիկս և սպիտակագեղ եղբայրս, և ուրիշ հարազատներ, որոնց ո՛չ անունները գիտեմ, ո՛չ ալ հասցէն... Բայց այդ նկարներու բո՜յրը՝ անմոռանալի ու զգլխիչ...

Հապա հայեացքնե՜ր: Չեմ կրնար մոռնալ, որովհետև ամենաշատը զիս անոնք կը հետաքրքրէին, անոնցմով կ'ուզէի հասկնալ ու ճանչնալ զիրենք: Կը սիրէի ու կ'ուրախանայի, երբ ամէն շարժումիս հետ ինծի կը նայէին. աջ կ'երթայի, կը հետևէին, ձախ՝ նորէն. կը հսկէի՞ն, որ սխալ բան չընեմ... Այնտեղ կային նաև այնպիսիք, որոնք չէի ուզեր, որ նայէին: Իսկ իմ սիրածները. չէի ուզեր, որ իրենց հայեացքը կտրէին ինձմէ. կենդանի այդ հայեացքները ինծի տուին հրաշալի մանկութիւն՝ սիրով զեղուն. հայեացքներ՝ պսպղուն ժպիտներով, որոնք շատ երես տուին ու շփացուցին զիս՝ ի դժգոհութիւն ծնողներուս: Սև ու սպիտակ լուսանկարնե՜ր, բայց այնքա՜ն գունաւոր, որոնք մինչև վերջ ալ բախտ չունեցան ալպոմ մ'ունենալու:

Անցան տարիներ: Եսասիրաբար մեր նոր՝ անձնական նկարները խնամքով իրենց տեղը գտան. իսկ հիները՝ սև ու սպիտակները, սև ու սպիտակ տարիները ապրած մեծերու նկարները մնացին նոյն արկղերուն մէջ: Հիմա ամօթի զգացում մը լեցուցեր է հոգիս. կ'ամչնամ:

Ալպոմը: Յուշերու մէկտեղում և յիշատակներու ,գանձատունե, ազատագրուած պատառիկներ, որոնք մէկ կողմէ քեզի կու տան մխիթարութիւն, միւս կողմէ տագնապը՝ շարունակութեան մը անհետացման: Կտրուած կամ կորսուած օղակը նոյնքան կարևոր է, որքան ինք՝ ամբողջ շղթան. մէկ ամբողջութիւն դառնալու հնարաւորութիւնը կորսնցնելու ափսոսանքի մասին է խոսքը: Ամբողջ մշակոյթ մը կը թաւալի այնտեղ, թէկուզ տաք ու սառած, տխուր և ուրախ ժպիտներու ոլորապտոյտով: Ի՞նչ գտնելու այնտեղ... Պիտի չերկարեմ ձեռքս՝ էջերը թերթատելու. յետոյ կը մտածեմ բովանդակութեան մասին, բայց բաւական է միայն տեսնեմ:

Տեսնեմ: Կենսագրութիւն կարդալու, պատմութիւն սերտելու, յուշերու եռևեփող անցեալ մը դիտելու ու ապրելու: Այնտեղ դատարկութիւնն ալ արժէք ունի, որ պիտի անպայման լեցուի ապրուած կեանքի գոյներով. դատարկութիւնն այնտեղ սպասում է իր տեղը տալու ցանկացողի, որուն նպատակն է շարունակել և շարունակուիլ: Այս դատարկութեան մէջ իմաստ կա. ոգին է լեցնելու, տեսնելու, ցանկութիւն հաղորդելու: Ա՛լ դատարկութիւն չէ...

Տարիները կ'անցնին: Իմ նոր նկարները ոչինչ կ'ըսեն ինծի: Չեմ ալ ուզեր նայիլ, բայց մասունքի պէս կը բռնեմ հարիւրներէն մասնիկ մնացած տասնեակ մը. կը շօշափեմ հիները. հոն է իմ՝ մեր պատմութիւնը:

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Յուրիկ Մուրադյան
ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմ դասախոս, աշխարհագետ **Կամսար Ավետիսյանը** Մարտունիից մի թույլ ուսանող ուներ, ում հաճախ էր խորհուրդ տալիս, որ դպրոց չգնա, որովհետև երեխաները մեղք են: Նա դուրս է մնում ինստիտուտից, անցնում են տարիներ, մի անգամ փողոցում հանդիպում է դասախոսին և ասում. «Ընկեր Ավետիսյան, Ձեզանից շատ շնորհակալ եմ, որ ինձ դուրս թողեցիք, ես հիմա պահեստապետ եմ աշխատում, դժվարին տարիներ են, համեցեք պահեստում ամեն ինչ կա՝ պանիր, միս, կարագ, երշիկ, ի՞նչ է հարկավոր»: «Է՛, տղա ջան, դու որ դպրոց չես գնացել, դա ինձ համար և՛ երշիկ է, և՛ միս է, և՛ կարագ է, և՛ պանիր է»,-պատասխանում է Կամսար Ավետիսյանը:

Մեր կուրսում մի թույլ ուսանողուհի կար: Կամսար Ավետիսյանից հաճախ էր «անբավարար» ստանում: Իսկ նա սովորության համաձայն կրկնում էր. «Եթե շրջկոմ, քաղկոմ ես գնալու, դա ուրիշ հարց, բայց այս գիտելիքով դպրոց չգնաս, մի 30 սերունդ այս առարկայից քեզ պես կմտածի:-Բայց վայրկյաններ անց ավելացնում էր,-չէ՛, դու 40 սերունդ կփչացնես, քեզ նմանները երկար են ապրում»:

«Լավ սովորեք, սիրելի ուսանողներ, որ կյանքում լավ մասնագետ դառնաք,ես ձեզ չեմ անիծում, բայց ցանկանում եմ, որ յուրաքանչյուրդ հանդիպեք ձեր որակի վիրաբույժի»,-ասում էր Կ. Ավետիսյանը:

«Ես լավագույն դարպասապահ եմ, չսովորող ուսանողին թույլ չեմ տալիս գոլ մտնի»,-ասում էր նա՝ նկատի ունենալով հաջորդ կուրս փոխադրվելը:

Կամսար Ավետիսյանն ահավոր գրքապաշտ էր ու շատ համեստ, անզիջող ու մարդկային, միշտ կրկնում էր. «Գիրքը մարդու ամենամեծ բարեկամն է»:

Մի անգամ Հանրապետության հրապարակի գրախանութում հարցնում է, թե Կամսար Ավետիսյանի «Աշխարհագրական անունների բացատրական բառարան» ունե՞ն, վաճառողուհին նայելով մաշված պայուսակ ու հին վերարկու կրող գնորդին՝ ասում է.«Նրա գրքերը ձեր ինչի՞ն են պետք, դրանք այնպիսի մարդիկ են կարդում: Գնա՛, գնա՛, չունենք»:

Երկրաբանության դասախոս ունեինք՝ **Ղևոնդ Զաքարյան**, ստորագրում էր՝ «Ղզաք», ուտող, խմող մարդ էր, եղել էր նաև բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան: Անկեղծ ասած չէր իմանում ո՞ր ուսանողը գիտի, ո՞րը՝ ոչ: Քննության ժամանակ պարտադիր հարցնում էր, թե որ ուսանողը որտեղից է, ու երբ ուսանողը չէր խոսում և իմանում էր, որ հանրապետության ցածրադիր շրջաններից է, ասում էր. «Գլուխդ հարթ է, բութ ես, չես սովորել, գնա՛, «անբավարար», բայց երբ երկու նախադասություն ասում էիր ու իմանում էր, որ բարձրադիր, լեռնային շրջանից ես, ասում էր. «Դու տաղանդավոր ու խելացի ես, գնա», «լավ» կամ նույնիսկ «գերազանց», էր նշանակում:

Մի անգամ հարցրեց. «Տղաներ, Արարատի երեկվա խաղն ինչպե՞ս է ավարտվել», պատասխանեցինք՝ 1:1, ընկեր Զաքարյան: Անմիջապես զայրացավ ու ասաց՝ ինձ հաշիվը պետք չէ, ասեք՝ օգուտ ո՞ւմ:

Ղ. Զաքարյանը դասախոսությունները կարդում էր հին, դեղնած թղթերից: Մի անգամ դասախոսություն կարդալիս ասաց. «Ի միջի այլոց, սրանից 20 տարի առաջ տեղի ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը»:

Իսկույն կռահեցինք, որ դասախոսությունը գրված է 1937 թվականին, իսկ դա 1967 թվականն էր... Վայ, ընկեր Զաքարյան, անշառ մարդ էր...

1967 թ. սեպտեմբերի 1-ին առաջին կուրսի առաջին օրը կուրս մտավ մեր դեկան, պատմաբան **Կարապետ Քարամյանը**: Հանդիպման վերջում պատասխանելով ուսանողների հարցերին, ավելացրեց, որ թոշակ տալիս են միայն հիվանդներին և նրանց, ում հայրը Հայրենական պատերազմի զոհված է: Իսկ երբ դեկանին հիշեցրի, թե մենք բոլորս 1949 և 1950 թթ. ծնվածներ ենք, այսինքն ծնվել ենք պատերազմից 4-5 տարի անց, ինչ զոհվածի մասին է խոսքը, նա պատասխանեց՝ բացի ձեզնից...

Պատմության բաժնում մի շատ խիստ դասախոս կար՝ **Վահան Իսկանյանը:** Շատ օբյեկտիվ, ազնիվ ու պահանջկոտ էր: Ուսանողներն այնքան էին վախենում, որ երկրորդ կուրս փոխադրված առաջին կուրսեցիները ամռանը երկրորդ կուրսն ավարտածներից վերցնում էին Միջին դարերի պատմության դասախոսությունների տետրերը, արտագրում, ամռանը սովորում, որ սեպտեմբերին, երբ անցնեն այդ առարկան, արդեն իմանան այն: Հիշում եմ, ինստիտուտում լուր տարածվեց, որ անգամ կնոջ քրոջ աղջկան Վահան Իսկանյանն «անբավարար» է դրել: Կինը հորդորում-խնդրում էր, որ երեխան մեղք է, ինստիտուտից դուրս է մնում, անընդհատ պարապում է, վատ է սնվում, անտրամադիր է, լաց է լինում, խիստ նյարդայնացել է: Վերջը մի կերպ «բավարար» է նշանակում, բայց ամբողջ գիշերը շուռումուռ է գալիս ու տանջվում, կինը հարցնում է.«Վահան, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես անհանգիստ: «Կնիկ, ոտքս տուր (պատերազմի հաշմանդամ էր և պրոթեզ էր կրում) գնամ քրոջդ աղջկան նորից «երկուս» նշանակեմ, չեմ կարողանում քնել»:

Հայաստանի անկախության
վերակերտման 100-ամյակ

ԳՐՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ»

Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարանը «Հայաստանի անկախության վերակերտման 100-ամյակ» ծրագրի շրջանակում և Հայոց բանակի ծննդյան օրվա առիթով բացել է «Հայոց բանակ» ցուցահանդեսը:



Ներկայացված են Հայոց բանակի կազմավորման, բանակի կայացման գործում ներդրում ունեցող գործիչների հեղինակած, նրանց մասին պատմող, բանակի առանձին զորամիավորումների, առանձին նվիրյալ հերոսների մասին պատմող 150-ից ավելի գիրք, ինչպես նաև «Հայկական բանակ» հանդեսի տարբեր համարներ:

Աննա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Գրադարանի ընթերցասրահների բաժնի վարիչ

Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների բարեգործական այցերը գիշերօթիկ օժանդակ դպրոցներ ավանդական են դարձել: Կամավորական գործունեության շրջանակներում այս տարի ևս կազմակերպվեց ամանորյա շրջայցեր տարբեր ուսումնական հաստատություններ և գիշերօթիկ օժանդակ դպրոցներ:

Սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա /նախադպրոցական/ մասնագիտությամբ 4-րդ կուրսի և մանկավարժական հոգեբանություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսներ Ք. Ասմարյանի և Ի Պոնոմարենկոյի հետ այցելեցին Մարաշի գիշերօթիկ օժանդակ դպրոց: Երեխաների համար զարգացնող խաղեր և խաղալիքներ էինք տարել: Այցի ընթացքում ծանոթացան դպրոցին, սաներին, մասնակցեցին ֆիզկուլտուրայի դասին և երեխաների հետ զանազան խաղեր կազմակերպեցին, իսկ հաջորդ օրը նույն կուրսերի ուսանողները վերը նշված դպրոցի սաներին ուղեկցեցին Կենդանաբանական այգի:

Անցնող տարվա վերջին օրերի ընթացքում Սկզբնական կրթության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ կուրսի կամավոր ուսանողներն այցելեցին ՀՊՄՀ հիմնական դպրոց՝ շնորհավորելու երեխաներին և նրանց ինքնաշեն խաղալիքներ նվիրելու:

Օրվա նույն խորհրդով ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա (նախադպրոցական կրթություն) և Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական) 3-րդ և 4-րդ կուրսերի կամավոր ուսանողները ֆակուլտետի դեկան Հ. Խաչատրյանի և նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Ի. Պոնոմարենկոյի հետ այցելեցին Նուբարաշենի հատուկ օժանդակ դպրոց: Ուսանողներն ամանորյա գեղեցիկ միջոցառմամբ երեխաներին հաճելի ու գեղեցիկ օր նվիրեցին, ապա նվերներ բաժանեցին:

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ֆակուլտետի մանկավարժական հոգեբանություն մասնագիտության 5 և Մանկավարժություն և մեթոդիկա (նախադպրոցական կրթություն) մասնագիտության 2 կամավոր ուսանողներ, մասնակցեցին «Ռոսիա Մոլլում» «Նվիրիր երազանք» խորագրով միջոցառմանը: Մանկատան երեխաների նամակների հիման վրա ուսանողները պատրաստել էին ամանորյա նվերներ և իրականություն դարձրել նրանց երազանքները:

Կամավորականների նախաձեռնած միջոցառումները շարունակական բնույթ են կրում, նախատեսվում են նոր այցեր երեխաների օժանդակ և հատուկ դպրոցներ, ինչպես նաև այցելություններ մի քանի կարիքավոր ընտանիքների:

Ի. ՊՈՆՈՄԱՐԵՆԿՈ
Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս

ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ

Բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների մտահղացմամբ և անմիջական մասնակցությամբ լսարանում ստեղծվել էր մաշտոցյան տրամադրություն: Ուշադրության կենտրոնում ունենալով հատկապես հայ գրերի գյուտը՝ նրանք կազմակերպել էին «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» խորագրով միջոցառում՝ նվիրված մեծանուն ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցին:

Շարականների մեղեդային ուղեկցությամբ ուսանողներն ասմունքեցին համանուն պոեմից որոշ հատվածներ, տեսասահիկների միջոցով նրանք իրենց ասելիքը դարձրին ավելի պատկերավոր և հուզիչ: Ուսանողները հետամուտ էին վերստին արժևորելու Մաշտոցի գործն ու ժառանգությունը: Կուրսղեկ Ս. Թորգոմյանն իր խոսքով խրախուսեց ուսանողներին՝ կարևորելով նմանատիպ միջոցառումների անցկացումը և խոստանալով, որ դրանք կրելու են շարունակական բնույթ: Ցերեկույթն ավարտվեց երդումով՝ անմար պահել Մաշտոցի լույսը, նրա հավերժական կենդանությունը:

Կառլոս Նազարյան

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՆՔ

Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի դասախոսներ Զ. Շահինյանը և Ա. Խուդոյանը Մանկավարժական համալսարանի 95-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպել էին հոգեբանական վարժանք «Ինքնակառավարման հմտությունների ձեռքբերում ինքնաճանաչման և ռեֆլեքսիվության միջոցով» թեմայով:

Վարժանքի անցկացման նպատակն էր նպաստել ուսանողների ինքնաճանաչմանը, անձի վերլուծականության, ռեֆլեքսիվության զարգացմանը, ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել վարքի կարգավորման հմտություններ:

Հոգեբանական վարժանքին մասնակցում էին Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի հոգեբանություն մասնագիտացման առաջին կուրսի ուսանողներ, ովքեր շնորհակալությունն հայտնեցին հետաքրքիր հանդիպման համար և ցանկություն հայտնեցին, որ այսպիսի միջոցառումները շարունակական բնույթ կրեն:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 26.01. 2018 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ